ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

https://doi.org/10.59546/18290744-2025.4-6-84

ԱՐՄԱՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ
ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դասախոս

ARMAN BABAKHANYAN
Judge of the First Instance Court of General Jurisdiction of Armavir Region of RA, Lecturer at the Chair of Criminal Law of YSU

АРМАН БАБАХАНЯН
Судья суда первой инстанции общей юрисдикции Армавирской области РА, Преподаватель кафедры уголовного права ЕГУ

ԳՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԴԵՄ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

SOME KEY ISSUES IN THE CRIMINAL-LEGAL FIGHT AGAINST THE PARTICIPANTS OF THE THIEVES' WORLD AND PERSONS ASSOCIATED WITH IT

НЕКОТОРЫЕ КЛЮЧЕВЫЕ ВОПРОСЫ УГОЛОВНО-ПРАВОВОЙ БОРЬБЫ ПРОТИВ УЧАСТНИКОВ ВОРОВСКОГО МИРА И ЛИЦ, СВЯЗАННЫХ С НИМ

Ներածություն

Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգրքի[1] (այսուհետ նաև՝ գործող Օրենսգիրք) 324-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ դրա հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կազմակերպելու կամ դրանց մասնակցելու համար, իսկ նույն հոդվածի 2-րդ մասով քրեական պատասխանատվություն է նախատեսվում քրեական ենթամշակույթ

[1] Տես Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, Միասնական կայք 2021.05.17-2021.05.30, Պաշտոնական հրապարակման օրը 27.05.2021:

կրող խմբավորմանը բռնության, սպառնալիքի կամ հարկադրանքի այլ եղանակով ներգրավելու համար:

Կարծում ենք, որ սույն հանցակազմը նախատեսելով՝ օրենսդիրը նպատակ է հետապնդել ակտիվացնել գողական աշխարհի ղեկավար չհանդիսացող անդամների և գողական աշխարհի անդամ չհանդիսացող, սակայն դրան օժանդակող անձանց դեմ մղվող քրեաիրավական պայքարը: Այնուամենայնիվ, քննարկվող հանցակազմում առկա որոշ մոտեցումներ խնդրահարույց են, ինչով էլ պայմանավորված է սույն հետազոտության արդիականությունը:

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվել գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի, սուբյեկտիվ կողմի, հանցակազմի բացասական (նեգատիվ) հատկանիշի, ինչպես նաև հետհանցավոր դրական վարքագիծ դրսևորելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու որոշ հիմնահարցերին:

Հիմնական հետազոտություն

Ինչպես արդեն նշվել է, «քրեական ենթամշակույթ կրող խմբավորման» փոխարեն անհրաժեշտ է կիրառել «գողական աշխարհ» եզրույթը[2]:

Այս առնչությամբ հարկ է նշել նաև, որ քրեական ենթամշակույթ կրող խմբավորում եզրույթի փոխարեն գողական աշխարհ եզրույթի կիրառման առավելությունը նաև այն է, որ քննարկվող իրավանորմում գողական աշխարհ եզրույթի կիրառման դեպքում յուրաքանչյուր քրեական վարույթով, փաստերի իրավական կանխավարկածի ուժով, որպես հանրահայտ փաստ ապացուցված կհամարվի գողական աշխարհի գոյությունը, եթե քրեական վարույթի ընթացքում չի ապացուցվի հակառակը (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի[3] 106-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ)՝ այդպիսով ազատելով վարույթն իրականացնող մարմնին յուրաքանչյուր քրեական վարույթի ընթացքում տվյալ փաստական հանգամանքն ապացուցելու պարտականությունից:

Մինչդեռ, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում եզրույթը կիրառելու դեպքում, հաշվի առնելով, որ այդպիսի խմբավորումների գոյությունը չի կարող դիտարկվել որպես հանրահայտ փաստ և ապացուցված համարվել փաստերի իրավական կանխավարկածի ուժով, յուրաքանչյուր քրեական վարույթով վարույթն իրականացնող մարմինը պետք է ապացուցի գողական աշխարհի շրջանակում գործող, առավել նեղ շրջանակի անձանց միավորման՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման գոյության հանգամանքը, ինչն ապացուցելը որոշակի դեպքերում իրենից կարող է դժվարություն ներկայացնել (օրինակ՝ երբ քրեական վարույթով հնարավոր է եղել բացահայտել այդպիսի խմբավորման միայն մեկ անդամին):

Այսպիսով, գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է գողական աշխարհին մասնակցելով, դրա հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելով, գողական աշխարհի հավաքներ կազմակերպելով կամ դրանց մասնակցելով:

Իրավաբանական գրականության մեջ տեսակետ է արտահայտվել այն մասին, որ քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելը կարող է դրսևորվել քրեական աստի-

[2] Տես *Բաբախանյան Ա.,* Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման (գողական աշխարհի) հասկացության և գողական աշխարհ ստեղծելը քրեականացնելու որոշ հիմնահարցեր, Պետություն և իրավունք, թիվ 2 (99), 2024, Երևան, էջեր 160-161:

[3] Տես Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, ՀՕ-306-Ն, ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, Միասնական կայք 2021.07.26-2021.08.08 Պաշտոնական հրապարակման օրը 28.07.2021:

ճանակարգությամբ և միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորմանն անդամակցելուն և խմբավորման կողմից սահմանված ու ճանաչված վարքագծի կանոններին համապատասխան գործելուն ուղղված կոնկրետ գործողություններ կատարելով: Օրինակ՝ քրեակատարողական հիմնարկում «գլազի» կողմից «զոն նայողի» հանձնարարությամբ քրեակատարողական ծառայողների ներկայության մասին «զոն նայողին» տեղեկատվություն հաղորդելն այն ժամանակ, երբ վերջինս «պատժում է» մոլախաղում տանուլ տված և պարտք մնացած գումարն «օբշակին» չհանձնած դատապարտյալին[4]:

Վերը մեջբերված տեսակետը վերաբերում է գողական աշխարհի բաղկացուցիչ մասերին՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորումներին և չի բացահայտում գողական աշխարհին մասնակցելու էությունը: Հետևաբար, գողական աշխարհին մասնակցելու վերաբերյալ պատկերացում կազմելու նպատակով՝ անհրաժեշտ է հիմնվել քննարկվող հանցակազմի հետ ընդհանուր բնութագրիչ գծեր ունեցող հանցավոր կազմակերպությանը (հանցավոր համագործակցությանը) մասնակցելու վերաբերյալ արտահայտված մոտեցումների[5] վրա:

Արդյունքում, հետևություն ենք անում, որ որպես գողական աշխարհին մասնակցել պետք է դիտարկել գողական աշխարհի կազմի մեջ ընդգրկված լինելու պայմաններում գողական աշխարհի նպատակ հանդիսացող կոնկրետ արարքներ կատարելը կամ գողական աշխարհի գործունեության ապահովմանն ուղղված գործառութային պարտականություններ կատարելը (ֆինանսավորել, տեղեկատվություն տրամադրել, փաստաթղթաշրջանառություն իրականացնել, գաղտնապահություն ապահովելը և այլն) կամ գողական աշխարհի ղեկավարների այլ առաջադրանքներ կատարելը:

Գողական աշխարհին մասնակցելն ավարտված է համարվում գողական աշխարհի կազմի մեջ ընդգրկված լինելու պայմաններում գողական աշխարհի նպատակ հանդիսացող կամ գողական աշխարհի գործունեության ապահովմանն ուղղված կոնկրետ արարք կամ գողական աշխարհի ղեկավարի այլ առաջադրանք կատարելու պահից:

Գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի մյուս դրսևորումն է գողական աշխարհի հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելը:

Ըստ Կ. Բիշարյանի՝ այն արտահայտվում է նման խմբավորման մասնակից չհանդիսացող, խմբավորմանը չանդամակցող անձի կողմից գողական աշխարհի կողմից հետապնդվող նպատակների իրականացմանը որևէ դերակատարությամբ մասնակցելու մեջ: Որպես այդպիսիք հանդես են գալիս քրեական աստիճանակարգությունից դուրս գտնվող, վախից կամ անելանելությունից քրեական ենթամշակույթին հարող այն անձինք, որոնք խմբավոր-

[4] Տես *Բիշարյան Կ. Ա.,* Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը (գիտագործնական մեկնաբանություններ), գիտ. խմբ.՝ **Առաքելյան Ս. Վ.**, Երևան, Արդարադատության ակադեմիա, 2020, էջ 37, (հասանելի է https://aoj.am/storage/library/academy-publications/cA1p3cXVvJQorU9WKQ9tqumypZNDI64fq9C5lzEu.pdf հղումով 20.11.2024թ. դրությամբ):

[5] Տես Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս, դասագիրք բուհերի համար, վեցերորդ հրատ.՝ փոփոխ. և լրաց., խմբ.՝ *Ղազինյան Գ. Ս.,* Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 514, Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 10 июня 2010 г. N 12 «О судебной практике рассмотрения уголовных дел об организации преступного сообщества (преступной организации) или участии в нем (ней)», 15-րդ կետ, (հասանելի է https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_101362/ հղումով 20.11.2024թ. դրությամբ), *Виденькина Ж.В.* Уголовная ответственность за организацию преступного сообщества или участие в нем, дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук, Москва, 2012, էջ 110, (հասանելի է https://www.twirpx.com/file/2106501/ հղումով 20.11.2024թ. դրությամբ), *Якушева Т. В.* Законодательная регламентация и практика привлечения к уголовной ответственности за организацию преступного сообщества (преступной организации), дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук, Москва, 2016, էջեր 102-103, (հասանելի է https://www.twirpx.com/file/1984128/ հղումով 20.11.2024թ. դրությամբ):

ման կողմից հետապնդող նպատակների իրականացմանն ունենում են օժանդակ ներգրավվածություն: Օրինակ՝ խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացմանը ներգրավված անձինք են քրեակատարողական հիմնարկներում գործող քրեական ենթամշակույթին հարող՝ «աբսլուգը» և «արվամոլները»:

Ընդ որում, այդ կատեգորիաների անձանց կողմից խմբավորմանը ներգրավված լինելու օժանդակ դերակատարությամբ պայմանավորված՝ նրանց կողմից պետք է կատարվեն կոնկրետ գործողություններ, որպեսզի արարքը որակվի որպես խմբավորման նպատակների իրականացմանը ներգրավված լինել: Օրինակ՝ քրեակատարողական հիմնարկում գտնվող «արվամոլների» կողմից «զոն նայողի» միջնորդավորված հանձնարարությամբ թմրամիջոցների, հեռախոսների, արգելված այլ իրերի ներկրումը քրեակատարողական հիմնարկի բնակելի գոտիներ[6]:

Ընդհանուր առմամբ, համաձայն լինելով վերը մեջբերված իրավական դիրքորոշումների հետ, այնուամենայնիվ, չենք կարող համաձայնվել այն տեսակետի հետ, որ որպես այդպիսիք հանդես են գալիս վախից կամ անելանելությունից քրեական ենթամշակույթին հարող անձինք: Թեև, հնարավոր է, որ գողական աշխարհի նպատակների իրականացմանը ներգրավված անձը գործի՝ վախից կամ անելանելությունից ելնելով, սակայն չենք կարող բացառել նաև այլ պատճառներով գողական աշխարհի նպատակների իրականացմանը ներգրավված լինելը: Օրինակ՝ որևէ կազմակերպության աշխատակից, ով գողական աշխարհի անդամ չէ, շահադիտական դրդումներով, գողական աշխարհի հետապնդած նպատակների իրականացման համար անհրաժեշտ, առևտրային գաղտնիք կազմող տեղեկություն է փոխանցում գողական աշխարհի անդամներին:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ գողական աշխարհին չանդամակցող, սակայն դրա գործունեությանն օժանդակ ներգրավվածություն ունեցող անձանց դեմ լիարժեք քրեաիրավական պայքար մղելու հանգամանքով պայմանավորված՝ կարծում ենք, որ օբյեկտիվ կողմի քննարկվող դրսևորման ձևակերպումն անհրաժեշտ է խմբագրել:

Գործող ձևակերպման պայմաններում ստացվում է, որ քրեական պատասխանատվություն է նախատեսված գողական աշխարհին չանդամակցող անձի կողմից ոչ թե գողական աշխարհի գործունեությանը ցանկացած ձևով օժանդակ ներգրավվածություն ունենալու համար, այլ միայն դրա հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու համար, որպիսի նպատակները սահմանված են գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 3-րդ մասում:

Ստացվում է, որ գողական աշխարհի կառավարչական գործառույթների իրականացմանը, օրինակ՝ կարգապահությունը խախտած գողական աշխարհի անդամի նկատմամբ տույժի միջոց կիրառելուն, գողական աշխարհին չանդամակցող անձի կողմից օժանդակ ներգրավվածություն ունենալու դեպքում վերջինիս արարքը չի կարող որակվել որպես գողական աշխարհի հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելը, քանի որ գողական աշխարհի անդամի նկատմամբ տույժի միջոց կիրառելը չի ընդգրկվում գողական աշխարհի հետապնդած նպատակներից ոչ մեկի մեջ, և նման արարքը պետք է որակվի գողական աշխարհը ղեկավարելուն կամ դրան մասնակցելուն օժանդակել:

Կարծում ենք, որ գողական աշխարհին չանդամակցող անձի արարքները որակելիս նման տարբերակված մոտեցման անհրաժեշտությունը ոչ միայն բացակայում է, այլ նաև որոշ դեպքերում չի բխում արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից:

[6] Տես *Բիշարյան Կ. Ա.*, նշված աշխ., էջեր 36-37:

Այսպես, գողական աշխարհի հետապնդած նպատակների իրականացմանը, օրինակ՝ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելուն ներգրավված լինելու դեպքում գողական աշխարհին չանդամակցող անձի արարքը ենթակա է որակման գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով՝ որպես գողական աշխարհի հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելը: Իսկ գողական աշխարհի ղեկավարի կողմից գողական աշխարհի կառավարչական գործառույթների իրականացմանը, օրինակ՝ կարգապահությունը խախտած գողական աշխարհի անդամի նկատմամբ տույժի միջոց կիրառելուն, գողական աշխարհին չանդամակցող անձի կողմից օժանդակ ներգրավվածություն ունենալու դեպքում վերջինիս արարքը ենթակա է որակման գործող Օրենսգրքի 46-323-րդ հոդվածի 1-ին մասով՝ որպես գողական աշխարհը ղեկավարելու օժանդակություն, որի համար նախատեսված պատիժն առավել խիստ է՝ գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասի համեմատ: Մինչդեռ, վերը նշված երկու իրավիճակներում նկարագրված արարքները միմյանցից հանրային վտանգավորության աստիճանով չեն տարբերվում այնքան, որ օրենսդիրը դրանց դեպքում դրսևորի տարբերակված մոտեցում և դրանց համար նախատեսի միմյանցից տարբերվող պատիժներ: Հետևաբար, գողական աշխարհին չանդամակցող անձի կողմից գողական աշխարհի գործունեությանը ներգրավված լինելու բոլոր դրսևորումների համար անհրաժեշտ է նախատեսել միասնական մոտեցում:

Նման պայմաններում, զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները[7] և հաշվի առնելով գողական աշխարհին չանդամակցող անձի կողմից գողական աշխարհի գործունեությանը ներգրավված լինելուն ուղղված արարքների հանրային վտանգավորության նվազ աստիճանը՝ գողական աշխարհը ղեկավարելու և դրան մասնակցելու համեմատ, առաջարկում ենք, գողական աշխարհի հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու փոխարեն քրեական պատասխանատվություն նախատեսել գողական աշխարհի գործունեությանը ներգրավված լինելու համար և այն նախատեսել առանձին հոդվածով՝ գործող Օրենսգրքի 324.1-ին հոդվածով, որպես ինքնուրույն հանցակազմ՝ դրա համար սահմանելով գործող Օրենսգրքի 323-324-րդ հոդվածներից մեղմ պատիժ, մասնավորապես՝ առաջարկվող հոդվածի 1-ին մասում որպես պատիժ նախատեսելով ազատազրկում՝ երեքից վեց տարի ժամկետով, իսկ 2-րդ մասում՝ ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում՝ ազատազրկում՝ չորսից ութ տարի ժամկետով:

Միևնույն ժամանակ, գործող Օրենսգրքի 324.1-ին հոդվածի 2-րդ մասում անհրաժեշտ է նախատեսել գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված հանցակազմի ծանրացնող հանգամանքները, բացառությամբ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից արարքը կատարելու դեպքի, քանի որ ենթադրվում է, որ նման կարգավիճակ ունեցող անձը չի կարող հանդես գալ գողական աշխարհի գործունեությանը ներգրավված անձի կարգավիճակում:

Այս առումով մենք համակարծիք ենք իրավակիրառ պրակտիկայում արտահայտված այն տեսակետի հետ, որ եթե այս արարքը կարող է կատարվել միայն խմբավորման անդամ չհանդիսացող անձի կողմից, ապա ստացվում է, որ օբյեկտիվորեն չի կարող գոյություն ունենալ այս արարքը քրեական ենթամշակույթի բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից կատարելը[8]:

[7] Տես *Բաբախանյան Ա.*, Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու որոշ հիմնահարցեր, Պետություն և իրավունք, N 1 (95), Երևան, 2023, էջ 128, (հասանելի է https://journals.ysu.am/index.php/state-and-law/article/view/10195 հղումով 20.11.2024թ. դրությամբ):

[8] Տես Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԴ/1369/01/20 քրեական

Պետք է նշել, որ գողական աշխարհի գործունեությանը ներգրավված լինելը, գողական աշխարհը ղեկավարելու կամ դրան մասնակցելու օժանդակություն դիտարկելու փոխարեն, ինքնուրույն հանցակազմով նախատեսելու նպատակահարմարության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ հետագայում քրեաիրավական տարբեր ինստիտուտների կիրառման ժամանակ այդ արարքների համար հնարավոր է նախատեսել տարբերակված մոտեցումներ: Օրինակ՝ համաներում հայտարարելիս՝ գործող Օրենսգրքի 323-324-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների դեպքում՝ համաներման կիրառման արգելք նախատեսելիս, հնարավոր է թույլատրել համաներման կիրառում գողական աշխարհի գործունեությանը ներգրավված անձանց նկատմամբ, կամ, հնարավոր է ցուցաբերել տարբերակված մոտեցում հետհանցավոր դրական վարքագիծ դրսևորելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատող խրախուսական նորմ նախատեսելու հարցում:

Գողական աշխարհի գործունեությանը ներգրավված լինելը քննարկելիս հարկ է նաև հաշվի առնել արտասահմանյան երկրներից հատկապես՝ Վրաստանի վերաբերելի իրավակարգավորումները:

Այսպես, Վրաստանի քրեական օրենսգրքի[9] 223[3]-րդ հոդվածի («գողական համագործակցության» գործունեությանն աջակցել) 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում «գողական համագործակցությանը» կամ «գողական համագործակցության» անդամին, «օրենքով գողին» բանավոր, գրավոր կամ արտահայտման այլ միջոցներով հրապարակայնորեն աջակցություն արտահայտելու համար, եթե դա ստեղծում է «գողական համագործակցության» գործունեության իրականացման ակնհայտ, ուղղակի և էական սպառնալիք:

Կարծում ենք, որ բացակայում է Վրաստանի քրեական օրենսգրքի 223[3]-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը գործող Օրենսգրքում նախատեսելու անհրաժեշտությունը, քանի որ նման արարքներն օժտված չեն հանրային վտանգավորության բարձր աստիճանով և դրանց դեմ հնարավոր է պայքար մղել առանց քրեաիրավական գործիքակազմի՝ իրավական այլ միջոցներով (օրինակ՝ վարչական իրավունքի շրջանակում վարչական տույժերի կիրառմամբ, քրեակատարողական իրավունքի շրջանակում տույժի միջոցների կիրառմամբ, աշխատանքային իրավունքի շրջանակում կարգապահական տույժերի կիրառմամբ):

Գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի հաջորդ դրսևորումներն են գողական աշխարհի հավաքներ կազմակերպելը կամ դրանց մասնակցելը:

Օբյեկտիվ կողմի այդ երկու դրսևորումներն առավելապես բնորոշ են քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց: Ուստի, նման դեպքերում արարքը ենթակա է որակման նշված հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով: Այդօրինակ հավաքները կարող են դրսևորվել երկու կամ ավելի անձանց կողմից ինչպես ֆիզիկապես հավաքվելով, այնպես էլ հաղորդակցության ցանկացած եղանակով (այդ թվում՝ էլեկտրոնային) հաղորդակցվելով՝ այս կամ այն անձի կողմից խմբավորմանն անդամակցելու կամ անդամակցությունը դադարեցնելու հարցը քննարկելու (լուծելու), խմբավորման անդամի կարգավիճակը փոխելու, անօրինական օգուտը տնօրինելու, ինչպես նաև խմբավորման կողմից հետապնդվող նպատակներին վերաբերող ցանկացած այլ հարց լուծելու նպատակով[10]:

գործով «Սահմանադրական դատարան դիմելու մասին» 2021 թվականի հունիսի 21-ի որոշումը (հասանելի է https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=45880421204095622 հղումով 20.11.2024թ. դրությամբ):

[9] Տես Уголовный кодекс Грузии (հասանելի է https://matsne.gov.ge/ru/document/view/16426?publication=259 հղումով 20.11.2024թ. դրությամբ):

[10] Տես *Բիշարյան Կ. Ա.*, նշված աշխ., էջ 38:

«Գողական հավաքներում» որոշվում է ընդհանուր գաղափարախոսությունը, «գողական գանձարանի» համալրման աղբյուրները, լուծվում են հակառակորդ (հակամարտող) կողմերի միջև վեճերը, նշանակվում են առանձին տարածքների (օբյեկտների) համար նայողներ (պատասխանատուներ), քննարկվում է «օրենքով գող» կոչման թեկնածուների ճակատագիրը[11]:

Ուշագրավ է, որ համաձայն օպերատիվ տվյալների՝ հայտնի են դեպքեր, երբ գողական հավաքները՝ «սխոդկաները» կազմակերպվել են տեսակապ ապահովող ծրագրերի միջոցով[12]:

Նախ, գործող Օրենսգրքի համակարգային վերլուծությունից բխում է, որ օբյեկտիվ կողմի դրսևորումները հոգնակի թվով նախատեսելն ընդունելի չէ (օրինակ՝ գործող Օրենսգրքի 326-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր), հետևաբար գողական աշխարհի հավաքներ կազմակերպելու կամ դրանց մասնակցելու փոխարեն առավել ընդունելի կլինի նախատեսել գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը:

Բացի դրանից՝ հարկ ենք համարում քննարկել գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը՝ որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորումներ, գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսելու անհրաժեշտությունը:

Այսպես, գողական աշխարհը ղեկավարելը, գողական աշխարհին մասնակցելը և գողական աշխարհի գործունեությանը ներգրավված լինելը, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը կարող են դրսևորվել գողական աշխարհի հավաք կազմակերպելով կամ դրան մասնակցելով:

Օրինակ, գողական աշխարհը ղեկավարող անձը կարող է, գողական աշխարհի կազմակերպական կամ կառավարչական գործառույթների իրականացման նպատակով, կազմակերպել գողական աշխարհի հավաք, կամ մասնակցել գողական աշխարհի մեկ այլ ղեկավարի կողմից կազմակերպած հավաքին կամ գողական աշխարհի մասնակիցը կամ գողական աշխարհի գործունեությանը ներգրավված անձը կարող են գողական աշխարհի ղեկավարի առաջադրանքով կազմակերպել գողական հավաք կամ մասնակցել դրան:

Նման պայմաններում, պետք է նշել, որ գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասում, որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորումներ՝ գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը նախատեսված չլինելու դեպքում չի առաջանա «օրենսդրական բաց», և գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը կորակվեն որպես գողական աշխարհը ղեկավարել, գողական աշխարհին մասնակցել, գողական աշխարհի գործունեությանը ներգրավված լինել, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալ կամ ստանալ կամ պահպանել՝ կախված տվյալ արարքը կատարած անձի՝ գողական աշխարհում ունեցած դերակատարությունից: Հետևաբար, ընդունելի տարբերակներից մեկն է գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը՝ որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորումներ, գործող Օրենսգրքում չնախատեսելը:

Այնուամենայնիվ, գործող Օրենսգրքում քննարկվող արարքները՝ որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորումներ, պահպանելու անհրաժեշտության պարագայում, գտնում ենք, որ դրանց կապակցությամբ օրենսդրի ներկայումս դրսևորած մոտեցումը ոչ միայն ընդունելի չէ,

[11] Տես *Գասպարյան Ա.*, Քրեական միջավայրը և դրա հանրային վտանգավորությունը, Դատական իշխանություն, մարտ-ապրիլ 2020 3-4 (249-250), էջեր 65-66, (հասանելի է http://ajra.am/hy/judicial-power հղումով 20.11.2024թ. դրությամբ):

[12] Տես *Գասպարյան Ա.*, Քրեական ենթամշակույթին առնչվող անձանց հանցավոր գործունեության վերաբերյալ քրեական գործերով օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների կազմակերպման և կատարման առանձնահատկությունները, Դատական իշխանություն, մայիս-հունիս 2021 5-6 (263-264), էջ 77, (հասանելի է http://ajra.am/hy/judicial-power հղումով 20.11.2024թ. դրությամբ):

այլ նաև էական վնաս է պատճառում քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքար մղելու արդյունավետությանը:

Այսպես, եթե գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը, այդ թվում նաև՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից, դիտարկվի որպես հատուկ հանցակազմ՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու, գողական աշխարհը ղեկավարելու, դրան մասնակցելու կամ դրա գործունեությանը ներգրավված լինելու նկատմամբ, ապա, ղեկավարվելով գործող օրենսգրքի Հատուկ մասի ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության կանոնով (գործող Օրենսգրքի 52-րդ հոդվածի 5-րդ մաս), նախապատվությունը պետք է տրվի հատուկ նորմին, և արարքը պետք է որակվի միայն հատուկ նորմով, այդ թվում նաև՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից կատարվելու դեպքում[13]:

Նման մեկնաբանության դեպքում ստացվում է, որ այդ ընդհանուր հանցակազմերից առանձնացվել է դրանց մասնավոր դրսևորումը՝ գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը՝ որպես հատուկ հանցակազմ, որն ընդգրկում է վերոնշյալ ընդհանուր հանցակազմերի բոլոր հատկանիշները, սակայն պարունակում է նաև այլ առանձնահատուկ հատկանիշ (տվյալ դեպքում, խոսքը վերաբերում է հանցակազմի օբյեկտիվ կողմի առանձնահատկությանը): Այսինքն, հատուկ նորմով նախատեսված հանցակազմը տեղավորվում է ընդհանուր հանցակազմերի «շրջագծում», սակայն տարբերվում է նրանով, որ բովանդակում է որևէ հատկանիշ, որի մասին ուղղակի նշումն ընդհանուր նորմերում բացակայում է: Այլ խոսքով, ընդհանուր քրեաիրավական նորմերով պատասխանատվություն է նախատեսվում հանցագործությունների որոշակի տեսակների, իսկ հատուկով՝ դրա մասնավոր դրսևորումների համար[14]:

Նման պայմաններում, սակայն, ստացվում է, որ գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը՝ որպես հատուկ հանցակազմ, նախատեսելն ոչ միայն դրական ազդեցություն չի թողնում, այլ նաև խոչընդոտում է քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական արդյունավետ պայքար մղելուն:

Այսպես, գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը, թեև, նախատեսված է որպես հատուկ հանցակազմ, սակայն քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից այդ արարքները կատարելու դեպքում նախատեսված է նույն պատժաչափը, ինչ-որ գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասում:

Նույն պատժաչափն է նախատեսված նաև գողական աշխարհին մասնակցելու և դրա գործունեությանը ներգրավված լինելու դեպքում: Հատկանշական է, որ այդ արարքների նկատմամբ գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը հանդիսանում է հատուկ հանցակազմ, սակայն դրանք բոլորը նախատեսված են գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածի միևնույն մասում:

Այսինքն, պետության պատժողական քաղաքականության տեսանկյունից վերը նշված

[13] Տես *Բիշարյան Կ. Ա.,* նշված աշխ., էջ 16, *Գասպարյան Ա.,* Քրեական ենթամշակույթին առնչվող անձանց հանցավոր գործունեության վերաբերյալ քրեական գործերով քննության կրիմինալիստիկական բնութագիրը, Դատական իշխանություն, սեպտեմբեր-հոկտեմբեր 2021 9-10 (267-268), էջ 87, (հասանելի է http://ajra.am/hy/judicial-power հղումով 20.11.2024 թ. դրությամբ):

[14] Տես *Առաքելյան Ս. Վ., Մկրտչյան Պ. Վ.,* Հանցագործությունների որակման հիմնախնդիրները, մենագրություն, Եր., Արդարադատության ակադեմիա, 2020, էջեր 217-218, (հասանելի է https://aoj.am/storage/library/academy-publications/tV5CzlND1JZ2pieKvMtuWhsRHU28fXUti2CAZiUN.pdf հղումով 20.11.2024թ. դրությամբ):

ընդհանուր հանցակազմերից, որպես դրանց մասնավոր դրսևորում՝ գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը, առանձնացնելը դառնում է ինքնանպատակ և որևէ փաստացի հետևանք չի առաջացնում:

Դեռ ավելին, գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը պատժվում է ավելի մեղմ, քան գողական աշխարհը ղեկավարելու այլ դրսևորումները: Ստացվում է, որ օրինակ՝ միանձնյա գողական աշխարհի ղեկավարմանն ուղղված արարք կատարելու դեպքում անձը ենթակա է ավելի խիստ պատժի, քան այն դեպքում, երբ նույն արարքը կատարվում է կոլեգիալ՝ գողական աշխարհի հավաք կազմակերպելու կամ դրան մասնակցելու միջոցով, որպիսի մոտեցումն ընդունելի չի կարող համարվել:

Այսպիսով, գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը՝ որպես հատուկ հանցակազմ, դիտարկելու պարագայում օրենսդրի՝ ներկայումս դրսևորած մոտեցումն ընդունելի չէ: Այդ արարքները հատուկ հանցակազմ դիտարկելը կհամարվեր արդարացված, եթե օրենսդիրը դրանց համար նախատեսեր, ընդհանուր հանցակազմերի համեմատությամբ, տարբերակված որևէ իրավական հետևանք (օրինակ՝ առավել խիստ կամ առավել մեղմ պատիժ), որպիսի մոտեցում դրսևորելու անհրաժեշտությունը, սակայն, կարծում ենք, բացակայում է:

Վերոգրյալի հիման վրա՝ գտնում ենք, որ գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը՝ որպես հատուկ հանցակազմ, դիտարկելու պարագայում այն՝ որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորում, նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է:

Նույնիսկ, եթե գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը չդիտարկվի որպես հատուկ հանցակազմ՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու, գողական աշխարհը ղեկավարելու, դրան մասնակցելու և դրա գործունեությանը ներգրավված լինելու նկատմամբ, և ընդունվի, որ այդ դեպքերում անձի արարքը պետք է որակել որպես հանցագործությունների համակցություն, այդ թվում նաև՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից կատարվելու դեպքում[15], կառաջանա խնդրահարույց իրավիճակ:

Նման մեկնաբանության դեպքում, հնարավոր կլինի որպես հանցագործությունների համակցություն որակել այն դեպքերը, երբ անձի արարքում գողական աշխարհի հավաք կազմակերպելու կամ դրան մասնակցելու հետ միաժամանակ առկա կլինեն քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու կամ գողական աշխարհը ղեկավարելու հանցակազմերը:

Մինչդեռ, անձի արարքում գողական աշխարհի հավաք կազմակերպելու կամ դրան մասնակցելու հետ միաժամանակ գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի մյուս դրսևորումներն առկա լինելու դեպքում հանցագործությունների համակցություն առկա չէ, քանի որ հանցագործությունների համակցությունը բացակայում է երկընտրելի օբյեկտիվ կողմ ունեցող հանցակազմերի իրականացման այն դեպքում, երբ միևնույն անձը միասնական դիտավորությամբ կատարում է այդ հանցակազմի օբյեկտիվ կողմի մեջ մտնող մեկից ավելի արարքներ (գործող Օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մաս): Նման տարբերակված մոտեցումը չունի որևէ հիմնավորում և չի կարող ընդունելի համարվել:

Եթե օրենսդիրը ցանկանում է գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը՝ որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորումներ, նախատեսել գործող

[15] Տես *Բիշարյան Կ. Ա.*, նշված աշխ., էջ 38:

Օրենսգրքում և որպես հանցագործությունների համակցություն դիտարկել այն դեպքերը, երբ անձի արարքում դրանց հետ միաժամանակ առկա կլինեն գործող Օրենսգրքի 322-324-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի օբյեկտիվ կողմի դրսևորումները, ապա դրա համար անհրաժեշտ է գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը նախատեսել առանձին հոդվածում:

Այս առումով հատկանշական է, որ գողական աշխարհի հավաք կազմակերպելուն կամ դրան մասնակցելուն համանման արարքները՝ որպես առանձին հանցակազմեր, նախատեսված են Վրաստանի քրեական օրենսգրքի 223[2]-րդ հոդվածում («գողական սխոդկային» մասնակցելը), Ուկրաինայի քրեական օրենսգրքի[16] 255-2-րդ հոդվածում (հանցավոր հավաք (սխոդկա) կազմակերպելը, անցկացնելուն աջակցելը կամ մասնակցելը):

Այնուամենայնիվ, մենք առավել հակված ենք գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը՝ որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորումներ, գործող Օրենսգրքում չնախատեսելու տարբերակին, քանի որ գտնում ենք, որ քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմեր նախատեսող հոդվածների շրջանակներում հնարավոր է արդարացի պատիժ նշանակել նաև այն դեպքերում, երբ այդ հոդվածներով նախատեսված արարքները կատարվում են անձի կողմից գողական աշխարհի հավաք կազմակերպելու կամ դրան մասնակցելու միջոցով: Հետևաբար, գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը՝ որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորումներ, գործող Օրենսգրքում նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ինչպես արդեն նշվել է, քննարկվող հոդվածի 2-րդ մասն անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել[17], հետևաբար դրան կրկին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

Նման պայմաններում, ստացվում է, որ գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածում որպես օբյեկտիվ կողմի դրսևորում անհրաժեշտ է նախատեսել միայն գողական աշխարհին մասնակցելը, իսկ գողական աշխարհի գործունեությանը ներգրավված լինելն անհրաժեշտ է նախատեսել առանձին հանցակազմի տեսքով՝ գործող Օրենսգրքի 324.1-ին հոդվածով:

Գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածի վերլուծության շրջանակներում անհրաժեշտ է քննարկել նաև այդ հոդվածում նախատեսված հանցակազմի բացասական (նեգատիվ) հատկանիշը:

Այսպես, արարքը գողական աշխարհին մասնակցել որակելու համար անհրաժեշտ է, որպեսզի բացակայեն նույն օրենսգրքի 319-րդ (հանցավոր կազմակերպությանը մասնակցելը) և 321-րդ (օրենքով չնախատեսված զինված միավորմանը մասնակցելը) հոդվածներով նախատեսված հանցանքների հատկանիշները:

Նախ, պետք է նշել, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի[18] (այսուհետ նաև՝ նախկին Օրենսգիրք) 223.3-րդ հոդվածը չէր պարունակում հանցակազմի բացասական հատկանիշ, որպիսի մոտեցումն ընդունելի չէր և արարքը որակելիս խնդիրներ էին առաջանալու այն դեպքերում, երբ անձի արարքում գողական աշխարհին մասնակցելու հանցակազմի հատկանիշների հետ միաժամանակ առկա

[16] Տես Criminal code of Ukraine (հասանելի է https://zakon.rada.gov.ua/laws/show/2341-14?lang=en#Text հղումով 20.11.2024թ. դրությամբ):

[17] Տես *Babakhanyan A.,* Some issues of the corpus delicti of "participation or involvement in a criminal subcultural group", Պետություն և իրավունք, N 3 (94), Երևան, 2022, էջ 185, (հասանելի է https://journals.ysu.am/index.php/state-and-law/article/view/8538 հղումով 20.11.2024թ. դրությամբ):

[18] Տես Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ.407:

կլինեին բանդիտիզմի, հանցավոր համագործակցությանը մասնակցելու կամ օրենքով չնախատեսված զինված միավորմանը մասնակցելու հանցակազմերի հատկանիշները:

Անդրադառնալով գործող իրավակարգավորումներին՝ հարկ է նշել, որ գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածում նախատեսված հանցակազմի բացասական (նեգատիվ) հատկանիշի ներկայիս ձևակերպումը խնդրահարույց է:

Գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով, իսկ հանցակազմի ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում՝ ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

Գործող Օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով, հանցակազմի ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում՝ ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով, իսկ գործող Օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը՝ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով, հանցակազմի ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում՝ ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Ստացվում է, որ արարքը հնարավոր չէ որակել գողական աշխարհին մասնակցել, երբ անձի արարքում միաժամանակ առկա կլինեն հավասար պատժվող հանցավոր կազմակերպությանը մասնակցելու կամ գողական աշխարհին մասնակցելուց առավել մեղմ պատժվող օրենքով չնախատեսված զինված միավորմանը մասնակցելու հանցակազմերի հատկանիշները, ինչն ընդունելի չէ: Կարծում ենք, որ առավել խիստը պետք է պատժվի հանցավոր կազմակերպությանը մասնակցելը, այնուհետև՝ գողական աշխարհին մասնակցելը, իսկ առավել մեղմ՝ օրենքով չնախատեսված զինված միավորմանը մասնակցելը:

Հետևաբար, անհրաժեշտ է հանցավոր կազմակերպությանը մասնակցելու համար նախատեսված պատիժը խստացնել և դրա համար սահմանել առավել խիստ պատիժ, քան գողական աշխարհին մասնակցելու համար՝ գործող Օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասում որպես պատիժ նախատեսելով ազատազրկում՝ հինգից ինը տարի ժամկետով, իսկ 2-րդ մասում՝ ազատազրկում՝ յոթից տասներկու տարի ժամկետով:

Նման պարագայում, անձի արարքում միաժամանակ գողական աշխարհին մասնակցելու և հանցավոր կազմակերպությանը մասնակցելու հանցակազմերի հատկանիշների առկայության դեպքում արարքը կորակվի միայն առավել խիստ պատժվող՝ հանցավոր կազմակերպությանը մասնակցելու հանցակազմով:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացասական հատկանիշը՝ գործող Օրենսգրքի 321-րդ հոդվածի մասով, ճանաչել ուժը կորցրած, իսկ գործող Օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասում կատարել լրացում և օրենքով չնախատեսված զինված միավորմանը մասնակցելու հանցակազմում որպես բացասական հատկանիշ նախատեսել ոչ միայն նույն օրենսգրքի 319-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշների բացակայությունը, այլ նաև նույն օրենսգրքի 324-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշների բացակայությունը: Նման պայմաններում, կբացառվի անձի արարքում միաժամանակ գողական աշխարհին մասնակցելու և օրենքով չնախատեսված զինված միավորմանը մասնակցելու հանցակազմերի առկայության դեպքում արարքն առավել մեղմ պատժվող՝ օրենքով չնախատեսված զինված միավորմանը մասնակցելու հանցակազմով որակելու հնարավորությունը:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև քննարկվող հանցակազմի սուբյեկտիվ կողմին:

Քրեական իրավունքի գիտության մեջ սուբյեկտիվ կողմը հանդիսանում է ցանկացած հանցակազմի կարևոր տարր: Այն իրենից ներկայացնում է անձի հոգեկան գործունեությունը

և այն անվանում են հանցագործության ներքին կողմը[19]:

Մեկ այլ կարծիքի համաձայն՝ հանցագործության սուբյեկտիվ կողմն անձի հոգեկան գործունեությունն է՝ կապված հանցագործության հետ: Ի տարբերություն օբյեկտիվ կողմի՝ սուբյեկտիվ կողմն արտացոլում է հանցանք կատարողի գիտակցական և կամային ոլորտներում ընթացող ներքին գործընթացները: Առանձնացվում են հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր և ֆակուլտատիվ (ոչ պարտադիր) հատկանիշներ[20]:

Անդրադառնալով հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշին՝ հարկ է նշել, որ հանցանքի սուբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել դիտավորությամբ (ուղղակի կամ անուղղակի) կամ անզգուշությամբ (հանցավոր ինքնավստահությամբ կամ հանցավոր անփութությամբ) (գործող Օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մաս, 25-րդ հոդվածի 2-րդ մաս, 26-րդ հոդվածի 1-ին մաս):

Միևնույն ժամանակ, գործող Օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հանցանքը համարվում է ուղղակի դիտավորությամբ կատարված, եթե անձը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են, և այդ արարքը կատարելը նրա նպատակն է կամ նպատակին հասնելու միջոցը, իսկ նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ հանցանքը համարվում է անուղղակի դիտավորությամբ կատարված, եթե անձը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են, ու թեև այդ արարքը կատարելը և տվյալ հանցանքն իրականացնելը նրա նպատակը չէ, այնուամենայնիվ կատարում է դա:

Այս առնչությամբ դիրքորոշում է արտահայտվել այն մասին, որ ձևական հանցակազմերում հանրորեն վտանգավոր հետևանքները հանցակազմի հատկանիշ չեն, ուստի հանցանք կատարողի գիտակցական և կամային վերաբերմունքը դրսևորվում է ոչ թե հետևանքների, այլ կատարվող արարքի նկատմամբ: Ձևական հանցակազմով հանցագործության դեպքում ուղղակի դիտավորությունը սկզբում սահմանվում է դիտավորության ընդհանուր հատկանիշը ներկայացնելով, այն է՝ անձը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են: Այնուհետև, ներկայացվում է արարքի նկատմամբ անձի վերաբերմունքը. արարքը կատարելը նրա նպատակն է կամ նպատակին հասնելու միջոց: Այն, որ արարքը կատարելը նպատակին հասնելու միջոց է, խիստ վերապահումով կարելի է համարել ցանկություն: Ուստի, գործող Օրենսգիրքը, ձեռնպահ մնալով «ցանկանալ» անորոշ հասկացությունն օգտագործելուց, ճշգրտել է ուղղակի դիտավորության հասկացությունը՝ այն բնորոշելով անձի իրական հոգեբանական վերաբերմունքն արտահայտող հասկացությամբ:

Քրեական իրավունքի տեսության մեջ գերակշռողն այն տեսակետն է, որ ձևական հանցակազմով նկարագրված հանցանքը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ, քանի որ, եթե անձը գիտակցում է իր արարքի հանրային վտանգավորությունն ու կատարում է այն, նշանակում է, որ ցանկացել է կատարել: Նախ, «ցանկանալ» հասկացությունը չի արտացոլում անձի իրական հոգեբանական վերաբերմունքը հանցանքի նկատմամբ: Երկրորդ՝ ձևական հանցակազմով նկարագրված հանցանքը, իհարկե ոչ հաճախ, սակայն կարող է կատարվել անուղղակի դիտավորությամբ: Օրենքում նկարագրվում է այն իրավիճակը, երբ հանցանքը կատարելն անձի նպատակը չէ, նպատակին հասնելու միջոց չէ, անխուսափելի չէ, սակայն անձն այնուամենայնիվ կատարում է դա, անտարբերություն դրսևորելով այն հանգամանքի կապակցությամբ, որ դրանով կարող է վնաս պատճառել օրենքով պաշտպանվող

[19] Տես *Виденькина Ж. В.*, նշված աշխ., էջ 112:

[20] Տես Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Ընդհանուր մաս, դասագիրք բուհերի համար, վեցերորդ հրատ.՝ փոփոխ. և լրաց., խմբ.՝ *Ղազինյան Գ. Ս.*, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 184:

իրավական բարիքին, այսինքն՝ անուղղակի դիտավորություն է դրսևորում[21]:

Անդրադառնալով հանցակազմի սուբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշներին՝ հարկ է արձանագրել, որ հանցագործության շարժառիթը, նպատակը և հույզերը, բնութագրելով անձի մոտ հանցագործության հետ կապված և դրան ուղեկցող հոգեկան գործընթացը՝ հանդիսանում են հանցակազմի սուբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշներ: Եթե հանցագործության շարժառիթը, նպատակը կամ հույզերն ընդգրկված են քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում՝ որպես տվյալ հանցակազմի պարտադիր հատկանիշ, ապա արարքում դրանց բացակայությունը կվկայի տվյալ հանցակազմի բացակայության մասին[22]:

Գտնում ենք, որ քննարկվող հանցակազմի սուբյեկտիվ կողմը դրսևորվում է միայն ուղղակի դիտավորությամբ[23]:

Այսպես, գողական աշխարհին մասնակցելու, գողական աշխարհի գործունեությանը ներգրավված լինելու դեպքում անձը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են, և այդ արարքը կատարելը նրա նպատակն է կամ նպատակին (օրինակ՝ գույքային օգուտ ստանալուն, հեղինակություն ձեռք բերելուն) հասնելու միջոցը:

Այս առնչությամբ չենք կարող համաձայնվել իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետի հետ, որ սուբյեկտիվ կողմից քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացմանը ներգրավված լինելը (գողական աշխարհի գործունեությանը ներգրավված լինելը) կարող է դրսևորվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ[24]:

Պետք է փաստել, որ հանցակազմի սուբյեկտիվ կողմի առնչությամբ արտահայտված դիրքորոշումները կիրառելի են նաև գործող Օրենսգրքի 322-323-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի նկատմամբ[25]:

Գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածի 4-րդ մասը պարունակում է խրախուսական նորմ, ըստ որի՝ գողական աշխարհին մասնակցելու կամ ներգրավելու մասին իրավասու մարմիններին կամովին հայտնած և դրա գործունեության խափանմանը նպաստած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար:

Նախ, խրախուսական նորմի ներկայիս ձևակերպումից բխում է, որ այն կիրառելի է ոչ միայն գողական աշխարհի մասնակցի և ներգրավողի նկատմամբ, այլ նաև այլ անձանց, այդ թվում նաև՝ գողական աշխարհը ղեկավարողների նկատմամբ, որոնք գողական աշխարհին մասնակցելու կամ ներգրավելու մասին իրավասու մարմիններին կամովին կհայտնեն և դրա գործունեության խափանմանը կնպաստեն, քանի որ խրախուսական նորմում օգտագործվում է «ազատվում է քրեական պատասխանատվությունից» ընդհանրական ձևակերպումը, այլ ոչ թե «ազատվում է գողական աշխարհին մասնակցելու կամ ներգրավելու համար նախատես-

[21] Տես *Գաբուզյան Ա., Մարգարյան Ա., Սիմոնյան Տ.,* ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, 2022, էջ 56, (հասանելի է https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57 հղումով 30.11.2024թ. դրությամբ):

[22] Տես Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Ընդհանուր մաս, դասագիրք բուհերի համար, վեցերորդ հրատ.՝ փոփոխ. և լրաց., խմբ.՝ *Ղազինյան Գ. Ս.,* Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջեր 213, 218:

[23] Այս առնչությամբ տես նաև *Բիշարյան Կ. Ա.,* նշված աշխ., էջ 39:

[24] Տես *Բիշարյան Կ. Ա.,* նշված աշխ., էջ 37:

[25] Այս առնչությամբ տես նաև *Բիշարյան Կ. Ա.,* նշված աշխ., էջեր 19, 34:

ված քրեական պատասխանատվությունից» ձևակերպումը, որի կիրառումը, կարծում ենք, առավել նպատակահարմար է:

Քննարկվող խրախուսական նորմի ներկայիս ձևակերպման պայմաններում, ստացվում է, որ օրինակ՝ գողական աշխարհի ղեկավարը կարող է իրավասու մարմիններին կամովին հայտնել իր ենթակա՝ գողական աշխարհի մասնակիցներից մեկի մասին և մյուս պայմանների առկայության դեպքում ազատվել գողական աշխարհը ղեկավարելու համար նախատեսված քրեական պատասխանատվությունից: Այլ կերպ, նպաստելով նվազ վտանգավոր հանցանքի՝ գողական աշխարհին մասնակցելու բացահայտմանը, անձը կազատվի առավել վտանգավոր հանցանքի՝ գողական աշխարհը ղեկավարելու համար նախատեսված քրեական պատասխանատվությունից, ինչը չի կարող ընդունելի համարվել:

Կարծում ենք, որ գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածում անհրաժեշտ է նախատեսել այնպիսի խրախուսական նորմ, որը կունենա օբյեկտիվորեն իրագործելի պայմաններ և կնպաստի գողական աշխարհի դիրքերի թուլացմանը Հայաստանի Հանրապետությունում:

Այս առումով հատկանշական է, որ խմբում ներգրավված անձինք միշտ չէ, որ ունենում են արտահայտված հանցավոր կողմնորոշում, սակայն անզորության, երբեմն ցածր մտավոր կարողության և անփորձության պատճառով չեն կարող հակազդել խմբի կազմակերպչի ճնշմանը: Ի տարբերություն կամավոր խմբի անդամ դարձած անձանց, վերջիններս առավել հակված են ճշմարիտ ցուցմունքներ տալ ոչ միայն իրենց հանցավոր գործունեության, այլ նաև՝ մասնակիցների գործողությունների վերաբերյալ[26]:

Առաջարկում ենք, գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածում նախատեսել քրեական պատասխանատվությունից ազատող իմպերատիվ խրախուսական նորմ, ըստ որի՝ գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը (գողական աշխարհը ղեկավարելը) բացահայտելուն աջակցած անձն ազատվում է գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար:

Ինչ վերաբերում է խրախուսական նորմում գողական աշխարհին մասնակցելու մասին իրավասու մարմիններին կամովին հայտնելը՝ որպես պայման, նախատեսելուն, ապա դա նպատակահարմար չէ, քանի որ այդպիսի պայմանն էականորեն կնվազեցնի տվյալ խրախուսական նորմի կիրառման դեպքերը:

Ակնկալել, որ գողական աշխարհի մասնակիցներն իրավասու մարմիններին կամովին կհայտնեն գողական աշխարհին մասնակցելու մասին, այդքան էլ իրատեսական չէ: Բացի այդ, նույնիսկ, գողական աշխարհին մասնակցելը բացահայտվելուց հետո տվյալ հանցանք կատարած անձին չպետք է զրկել քրեական պատասխանատվությունից ազատվելու հնարավորությունից՝ գողական աշխարհի ղեկավար կազմի ներկայացուցիչներին բացահայտելուն աջակցելու միջոցով:

Այդպիսի պայման նախատեսված չէ նաև գործող Օրենսգրքի 318-րդ և 319-րդ հոդվածների 3-րդ մասերում նախատեսված խրախուսական նորմերում:

Մեր կողմից առաջարկվող խրախուսական նորմը նախատեսելը, բացի կոնկրետ դեպքերում գողական աշխարհի ղեկավարների բացահայտումից, կարող է ունենալ նաև այլ դրա-

[26] Տես *Գասպարյան Ա.,* Քրեական ենթամշակույթին առնչվող անձանց հանցավոր գործունեության վերաբերյալ քրեական գործերով օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների կազմակերպման և կատարման առանձնահատկությունները, Դատական իշխանություն, մայիս-հունիս 2021 5-6 (263-264), էջ 89, (հասանելի է http://ajra.am/hy/judicial-power հղումով 20.11.2024թ. դրությամբ):

կան արդյունք: Մասնավորապես, նման խրախուսական նորմի առկայության դեպքում գողական աշխարհի ղեկավարները կարող են արդեն կասկածներ ունենալ, որ գողական աշխարհի մասնակիցները իրավապահ մարմինների տեսադաշտում հայտնվելիս, այլևս չեն պահպանի լռություն և կաջակցեն գողական աշխարհի ղեկավար կազմի բացահայտմանը, որպեսզի ազատվեն քրեական պատասխանատվությունից: Դա կհանգեցնի գողական աշխարհում անվստահության մթնոլորտի և դրա անդամների միջև լարվածության ուժեղացման, արդյունքում նաև՝ գողական աշխարհի դիրքերի թուլացմանը:

Միևնույն ժամանակ, հետհանցավոր դրական այլ վարքագիծ դրսևորելու դեպքերում գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարած անձանց նկատմամբ պետք է կիրառվի գործող Օրենսգրքի 81-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հայեցողական հիմքը, որը գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարած անձանց նկատմամբ կիրառելու համար անհրաժեշտ պայմանները պետք է հնարավորինս հստակեցվեն Վճռաբեկ դատարանի կողմից դատական մեկնաբանման միջոցով:

Զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները[27]՝ գտնում ենք, որ հետհանցավոր դրական վարքագիծ դրսևորելու պայմանով գողական աշխարհի մասնակցին քրեական պատասխանատվությունից ազատելու առնչությամբ արտահայտված մոտեցումները կիրառելի են նաև մեր կողմից առաջարկվող, գործող Օրենսգրքի 324.1-ին հոդվածով նախատեսված հանցակազմի՝ գողական աշխարհի գործունեությանը ներգրավված լինելու դեպքում: Միակ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հաշվի առնելով գողական աշխարհի գործունեությանը ներգրավված անձի դերակատարությունը և օժանդակ ներգրավվածությունը գողական աշխարհում՝ վերջինիս հնարավորություն պետք է տրվի ազատվել քրեական պատասխանատվությունից ոչ միայն գողական աշխարհի ղեկավարներին, այլ գործող Օրենսգրքի 322-324-րդ հոդվածներով նախատեսված հանցագործություններից ցանկացածը բացահայտելուն աջակցելու դեպքում:

Հարկ ենք համարում քննարկել նաև գործող Օրենսգրքի 325-րդ հոդվածում (քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելը) քրեական պատասխանատվությունից ազատող խրախուսական նորմ նախատեսելու նպատակահարմարության հարցը:

Այս առնչությամբ, կարծիք է արտահայտվել այն մասին, որ քննարկվող հոդվածով նախատեսված չէ նման արարք կատարած և քրեական հետապնդման մարմիններին կամովին այդ մասին հայտնած ու հանցագործության բացահայտմանն աջակցած անձանց քրեական պատասխանատվությունից ազատելու հետ կապված խրախուսական նորմ: Միևնույն ժամանակ, պետք է նկատի ունենալ, որ քննարկվող հոդվածով նախատեսված արարքը միջին ծանրության հանցագործություն է: Ուստի, համապատասխան իրավապայմանների առկայության պարագայում, յուրաքանչյուր դեպքում պետք է քննարկվի գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորության հարցը[28]:

Կարծում ենք, որ հետհանցավոր դրական վարքագիծ դրսևորելու պայմանով գողական աշխարհի մասնակցին և գողական աշխարհի գործունեությանը ներգրավված անձին քրեական պատասխանատվությունից ազատելու առնչությամբ արտահայտված մոտեցումները կի-

[27] Տես *Բաբախանյան Ա.,* Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու որոշ հիմնահարցեր, Պետություն և իրավունք, N 1 (95), Երևան, 2023, էջեր 127-128, (հասանելի է https://journals.ysu.am/index.php/state-and-law/article/view/10195 հղումով 20.11.2024թ. դրությամբ):
[28] Տես *Բիշարյան Կ. Ա.,* նշված աշխ., էջ 44:

ռառելի են նաև գործող Օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի դեպքում: Միակ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ գործող Օրենսգրքի 325-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարած անձին հնարավորություն պետք է տրվի ազատվել քրեական պատասխանատվությունից գործող Օրենսգրքի 322-324.1-ին հոդվածներով նախատեսված հանցագործություններից ցանկացածը բացահայտելուն աջակցելու դեպքում:

Հետևաբար, առաջարկում ենք գործող Օրենսգրքի 325-րդ հոդվածում նախատեսել քրեական պատասխանատվությունից ազատող իմպերատիվ խրախուսական նորմ, ըստ որի՝ գործող Օրենսգրքի 322-324.1-ին հոդվածներով նախատեսված հանցագործությանը բացահայտելուն աջակցած անձն ազատվում է գործող Օրենսգրքի 325-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար:

Իսկ գործող Օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հայեցողական հիմքը գործող Օրենսգրքի 325-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարած անձանց նկատմամբ պետք է կիրառվի հետհանցավոր դրական այլ վարքագիծ դրսևորելու դեպքերում, որը կիրառելու համար անհրաժեշտ պայմանները պետք է հնարավորինս հստակեցվեն Վճռաբեկ դատարանի կողմից դատական մեկնաբանման միջոցով:

Եզրակացություն

Այսպիսով, առաջարկում ենք, գողական աշխարհի հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու փոխարեն քրեական պատասխանատվություն նախատեսել գողական աշխարհի գործունեությանը ներգրավված լինելու համար և այն նախատեսել առանձին հոդվածով՝ գործող Օրենսգրքի 324.1-ին հոդվածով, որպես ինքնուրույն հանցակազմ՝ դրա համար սահմանելով գործող Օրենսգրքի 323-324-րդ հոդվածներից մեղմ պատիժ:

Բացի այդ, գտնում ենք, որ գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը՝ որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորումներ, գործող Օրենսգրքում նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է:

Անհրաժեշտ է նաև գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացասական հատկանիշը՝ գործող Օրենսգրքի 321-րդ հոդվածի մասով, ճանաչել ուժը կորցրած, իսկ գործող Օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասում կատարել լրացում և օրենքով չնախատեսված զինված միավորմանը մասնակցելու հանցակազմում որպես բացասական հատկանիշ նախատեսել ոչ միայն նույն օրենսգրքի 319-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշների բացակայությունը, այլ նաև նույն օրենսգրքի 324-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշների բացակայությունը:

Առաջարկում ենք նաև, գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածում նախատեսել քրեական պատասխանատվությունից ազատող իմպերատիվ խրախուսական նորմ, ըստ որի՝ գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը (գողական աշխարհը ղեկավարելը) բացահայտելուն աջակցած անձն ազատվում է գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար:

Գտնում ենք, որ հանցագործությունից հետո դրական վարքագիծ դրսևորելու պայմանով

գողական աշխարհի մասնակցին քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ ձևավորված մոտեցումները կիրառելի են նաև գործող Օրենսգրքի 324.1-ին հոդվածով նախատեսված հանցակազմի՝ գողական աշխարհի գործունեությանը ներգրավված լինելու դեպքերում: Միակ առանձնահատկությունն այն է, որ, հաշվի առնելով ներգրավված անձի դերակատարությունը և օժանդակ ներգրավվածությունը գողական աշխարհում, վերջինիս պետք է ընձեռվի հնարավորություն ազատվելու քրեական պատասխանատվությունից ոչ միայն գողական աշխարհի ղեկավարներին, այլև գործող Օրենսգրքի 322-324-րդ հոդվածներով նախատեսված հանցագործություններից որևէ մեկը բացահայտելուն աջակցելու դեպքում: Միևնույն ժամանակ, հետհանցավոր դրական վարքագիծ դրսևորելու պայմանով գողական աշխարհի մասնակցին և գողական աշխարհի գործունեությանը ներգրավված անձին քրեական պատասխանատվությունից ազատելու առնչությամբ արտահայտված մոտեցումները կիրառելի են նաև գործող Օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի դեպքում: Միակ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ գործող Օրենսգրքի 325-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարած անձին հնարավորություն պետք է տրվի ազատվել քրեական պատասխանատվությունից գործող Օրենսգրքի 322-324.1-ին հոդվածներով նախատեսված հանցագործություններից ցանկացածը բացահայտելուն աջակցելու դեպքում:

Ամփոփագիր: Սույն հոդվածը նվիրված է գողական աշխարհի մասնակիցների և դրան առնչվող անձանց դեմ քրեաիրավական պայքարի որոշ հիմնահարցերին: Հոդվածում հեղինակն անդրադարձ է կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի, սուբյեկտիվ կողմի, հանցակազմի բացասական (նեգատիվ) հատկանիշի, ինչպես նաև հետհանցավոր դրական վարքագիծ դրսևորելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու որոշ հիմնահարցերին, քանի որ դրանց առնչությամբ օրենսդրի դրսևորած որոշ մոտեցումներ խնդրահարույց են, ինչով էլ պայմանավորված է սույն հետազոտության արդիականությունը:

Արդյունքում՝ հեղինակը հանգել է հետևության, որ գողական աշխարհի հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու փոխարեն անհրաժեշտ է քրեական պատասխանատվություն նախատեսել գողական աշխարհի գործունեությանը ներգրավված լինելու համար և այն նախատեսել առանձին հոդվածով: Բացի դրանից՝ հեղինակը գտել է, որ գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը՝ որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորումներ, ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է:

Հեղինակը ներկայացրել է նաև առաջարկներ՝ ուղղված ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացասական հատկանիշի կատարելագործմանը, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 324-325-րդ հոդվածներում հետհանցավոր դրական վարքագիծ դրսևորելու պայմանով քրեական պատասխանատվությունից ազատող իմպերատիվ խրախուսական նորմեր նախատեսելուն:

Annotation. This article is dedicated to some key issues in the criminal-legal fight against the participants of the thieves' world and persons associated with it. In the article, the author referred to some issues of the objective side, the subjective side, the negative characteristic of the corpus delicti provided for in Article 324 of the Criminal Code of the Republic of Armenia, as well as some issues of exemption from criminal liability in cases of positive post-criminal behavior, because some of the approaches taken by the legislator in relation to them are problematic, which is why this research is so relevant.

As a result, the author came to the conclusion that instead of being involved in the implementation of the goals pursued by the thieves' world, it is necessary to provide for criminal liability for being involved in the activities of the thieves' world and to provide for it in a separate article. In addition, the author found that there is no need to provide for

the organization of a gathering of the thieves' world or participation in it as separate manifestations of the objective side in the Criminal Code of the Republic of Armenia.

The author also presented proposals aimed at improving the negative characteristic of the corpus delicti provided for in Article 324 of the Criminal Code of the RA, as well as providing imperative incentive norms exempting from criminal liability on the condition of demonstrating positive post-crime behavior in Articles 324-325 of the Criminal Code of the RA.

Аннотация. Данная статья посвящена некоторым ключевым вопросам уголовно-правовой борьбы с участниками воровского мира и связанными с ним лицами. В статье автор затронул некоторые вопросы объективной стороны, субъективной стороны, негативной характеристики состава преступления, предусмотренного ст. 324 УК РА, а также некоторые вопросы освобождения от уголовной ответственности в случаях позитивного посткриминального поведения, поскольку некоторые подходы законодателя в отношении их являются проблемными, чем и обусловлена актуальность данного исследования.

В результате автор пришел к выводу, что вместо вовлечения в реализацию целей, преследуемых воровским миром, необходимо предусмотреть уголовную ответственность за вовлечение в деятельность воровского мира и предусмотреть ее в отдельной статье. Кроме того, автор пришел к выводу, что нет необходимости предусматривать в УК Республики Армения организацию собрания воровского мира или участие в нем, как отдельные проявления объективной стороны.

Автор также представил предложения, направленные на улучшение негативной характеристики состава преступления, предусмотренной в ст. 324 УК РА, а также императивные поощрительные нормы, освобождающие от уголовной ответственности при условии демонстрации позитивного посткриминального поведения в ст. 324-325 УК РА.

Բանալի բառեր *– գողական աշխարհի մասնակիցներ, գողական աշխարհին առնչվող անձինք, հանցագործության օբյեկտիվ կողմ, հանցագործության սուբյեկտիվ կողմ, հանցակազմի բացասական հատկանիշ, հետհանցավոր դրական վարքագիծ, քրեական պատասխանատվությունից ազատող խրախուսական հատուկ նորմ:*

Keywords: *participants of the thieves' world, persons associated with the thieves' world, objective side of the crime, subjective side of the crime, negative characteristic of the corpus delicti, positive post-criminal behavior, special incentive norm exempting from criminal liability.*

Ключевые слова: *участники воровского мира; лица, связанные с воровским миром; объективная сторона преступления; субъективная сторона преступления; негативный признак состава преступления; позитивное посткриминальное поведение; специальная поощрительная норма, освобождающая лиц от уголовной ответственности.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, Միասնական կայք 2021.05.17-2021.05.30, Պաշտոնական հրապարակման օրը 27.05.2021:

2. Բաբախանյան Ա., Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման (գողական աշխարհի) հասկացության և գողական աշխարհ ստեղծելը քրեականացնելու որոշ հիմնահարցեր, Պետություն և իրավունք, թիվ 2 (99), 2024, Երևան, 153-162 էջեր:

3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, ՀՕ-306-Ն, ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, Միասնական կայք 2021.07.26-2021.08.08

Պաշտոնական հրապարակման օրը 28.07.2021:

4. Բիշարյան Կ. Ա., Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը (գիտագործնական մեկնաբանություններ), գիտ. խմբ.՝ Առաքելյան Ս.Վ., Երևան, Արդարադատության ակադեմիա, 2020, 46 էջ, (հասանելի է https://aoj.am/storage/library/academy-publications/cA1p3cXVvJQorU9WKQ9tqumypZNDI64fq9C5IzEu.pdf հղումով 20.11.2024թ. դրությամբ):

5. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս, դասագիրք բուհերի համար, վեցերորդ հրատ.՝ փոփոխ. և լրաց., խմբ.՝ Ղազինյան Գ.Ս., Երևան, ԵՊՀ հրատ., 2012, 1040 էջ:

6. Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 10 июня 2010 г. N 12 «О судебной практике рассмотрения уголовных дел об организации преступного сообщества (преступной организации) или участии в нем (ней)», (հասանելի է https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_101362/ հղումով 20.11.2024թ. դրությամբ):

7. Виденькина Ж.В. Уголовная ответственность за организацию преступного сообщества или участие в нем, дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук, Москва, 2012, 199 էջ, (հասանելի է https://www.twirpx.com/file/2106501/ հղումով 20.11.2024թ. դրությամբ):

8. Якушева Т.В. Законодательная регламентация и практика привлечения к уголовной ответственности за организацию преступного сообщества (преступной организации), дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук, Москва, 2016, 219 էջ, (հասանելի է https://www.twirpx.com/file/1984128/ հղումով 20.11.2024 թ. դրությամբ):

9. Բաբախանյան Ա., Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու որոշ հիմնահարցեր, Պետություն և իրավունք, N 1 (95), Երևան, 2023, 118-129 էջեր, (հասանելի է https://journals.ysu.am/index.php/state-and-law/article/view/10195 հղումով 20.11.2024 թ. դրությամբ):

10. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԴ/1369/01/20 քրեական գործով «Սահմանադրական դատարան դիմելու մասին» 2021 թվականի հունիսի 21-ի որոշումը (հասանելի է https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=45880421204095622 հղումով 20.11.2024 թ. դրությամբ):

11. Уголовный кодекс Грузии (հասանելի է https://matsne.gov.ge/ru/document/view/16426?publication=259 հղումով 20.11.2024 թ. դրությամբ):

12. Գասպարյան Ա., Քրեական միջավայրը և դրա հանրային վտանգավորությունը, Դատական իշխանություն, մարտ-ապրիլ 2020 3-4 (249-250), 62-71 էջեր, (հասանելի է http://ajra.am/hy/judicial-power հղումով 20.11.2024 թ. դրությամբ):

13. Գասպարյան Ա., Քրեական ենթամշակույթին առնչվող անձանց հանցավոր գործունեության վերաբերյալ քրեական գործերով օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների կազմակերպման և կատարման առանձնահատկությունները, Դատական իշխանություն, մայիս-հունիս 2021 5-6 (263-264), 76-94 էջեր, (հասանելի է http://ajra.am/hy/judicial-power հղումով 20.11.2024 թ. դրությամբ):

14. Գասպարյան Ա., Քրեական ենթամշակույթին առնչվող անձանց հանցավոր գործունեության վերաբերյալ քրեական գործերով քննության կրիմինալիստիկական բնութագիրը, Դատական իշխանություն, սեպտեմբեր-հոկտեմբեր 2021 9-10 (267-268), 84-98 էջեր, (հասանելի է http://ajra.am/hy/judicial-power հղումով 20.11.2024 թ. դրությամբ):

15. Առաքելյան Ս.Վ., Մկրտչյան Պ.Վ., Հանցագործությունների որակման հիմնախնդիրները, մենագրություն, Եր., Արդարադատության ակադեմիա, 2020, 400 էջ, (հասանելի է https://aoj.am/storage/library/academy-publications/tV5CzlND1JZ2pieKvMtuWhsRHU28fXUti2CAZiUN.pdf հղումով 20.11.2024 թ. դրությամբ):

16. Criminal code of Ukraine (հասանելի է https://zakon.rada.gov.ua/laws/show/2341-14?lang=en#Text հղումով 20.11.2024 թ. դրությամբ):

17. Babakhanyan A. Some issues of the corpus delicti of “participation or involvement in a criminal subcultural group”, Պետություն և իրավունք, N 3 (94), Երևան, 2022, 178-186 էջեր, (հասանելի է https://journals.ysu.am/index.php/state-and-law/article/view/8538 հղումով 20.11.2024թ. դրությամբ):

18. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, ՀՀՊՏ

2003.05.02/25(260) Հոդ.407:

19. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Ընդհանուր մաս, դասագիրք բուհերի համար, վեցերորդ հրատ.՝ փոփոխ. և լրաց., խմբ.՝ Ղազինյան Գ. Ս., Երևան, ԵՊՀ հրատ., 2012, 544 էջ:

20. Գաբուզյան Ա., Մարգարյան Ա., Սիմոնյան Տ., ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, 2022, 497 էջ, (հասանելի է https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57 հղումով 30.11.2024թ. դրությամբ):

Բաբախանյան Ա. - ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դասախոս, էլ. հասցե՝ arman.babakhanyan@ysu.am:

Ներկայացվել է խմբագրություն 11.02.2025 թ., տրվել է գրախոսության 26.05.2025 թ., երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Տ. Սիմոնյանի կողմից, ընդունվել է տպագրության 10.07.2025 թ.: